Նախագիծ

«ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ»

ԱՌԱՐԿԱՅԻ ՉԱՓՈՐՈՇԻՉ

(8-9-րդ դասարաններ)

Բ Ա Ց Ա Տ Ր Ա Գ Ի Ր

Հասարակագիտության առարկայական չափորոշչի մշակման համար հիմք են ծառայել <<Կրթության մասին>> ՀՀ օրենքը, «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքը և Հանրակրթության պետական չափորոշիչը:

Հասարակագիտության չափորոշիչը ներառում է՝

- հասարակագիտության հայեցակարգը, որում ներկայացված են այն սկզբունքները, հարցադրումներն ու հիմնադրույթները, որոնք կողմնորոշիչ դեր ունեն կրթության բովանդակության մեջ հասարակագիտության դերն ու գործառույթները որոշելու և կրթության իրականացումն ապահովող անհրաժեշտ նյութերը՝ չափորոշիչները, ծրագրերը, ձեռնարկները մշակելու համար,
- առարկայի ուսումնական նպատակները,
- առարկայի բովանդակային պարտադիր միջուկը,
- ուսումնական գործունեության տեսակները, որոնք ուսուցման գործընթացում ըստ նպատակահարմարության կարող են ընտրվել և կիրառվել ուսուցչի կողմից,
- սովորողների պատրաստվածությանը (գիտելիքներ, կարողություններ, հմտություններ) ներկայացվող պահանջների և արժեքային համակարգի նկարագրությունները, ընդ որում՝ գիտելիքներին, կարողություններին և հմտություններին վերաբերող պահանջները ներկայացված են երեք՝ Ա, Բ, Գ խմբերով, որոնք համապատասխանում են՝ Ա - նվազագույն, Բ - միջին, Գ - բարձր պատրաստվածությանը,
- գրականության ցանկ:

ՀԱՅԵՑԱԿԱՐԳ

Հանրակրթության պետական չափորոշչի համաձայն՝ «Հասարակագիտություն» ուսումնական առարկան «Հասարակական գիտություններ» ուսումնական բնագավառը ներկայացնող պարտադիր ինտեգրված առարկա է հիմնական դպրոցի 8-9-րդ դասարանների և ավագ դպրոցի 10-12-րդ դասարանների համար: «Հասարակագիտություն» ինտեգրված առարկան միջին դպրոցում ներառում է նախնական գիտելիքներ փիլիսոփայությունից, իրավագիտությունից, բարոյագիտությունից, գեղագիտությունից:

Հանրակրթության նպատակների և կրթական բարեփոխումների խնդիրների տեսանկյունից կարևոր են այն հիմնադրույթները, որոնք կողմնորոշիչ դեր կունենան կրթության բովանդակության մեջ հասարակագիտության դերն ու գործառույթները որոշելու և կրթության կազմակերպմանն անհրաժեշտ նյութերը (չափորոշիչներ, ծրագրեր, ձեռնարկներ) մշակելու համար: Այդ առումով ելակետային նշանակություն ունի հասարակագիտության կրթական ներուժի բացահայտումը, ինչպես նաև հասարակագիտության կրթական հիմնախնդիրների հստակեցումն ու լուծման եղանակների ուրվագծումը:

Ժամանակակից աշխարհում մի շարք համընդհանուր հիմնախնդիրներ լուծելու տեսանկյունից ավելի ու ավելի է կարևորվում հասարակագիտություն ուսանելու անհրաժեշտությունը հանրակրթական դպրոցում:

Հայաստանի Հանրապետությունում տեղի ունեցող ժողովրդավարացման գործընթացները պահանջում են քաղաքացիական այնպիսի որակների դաստիարակում, ինչպիսիք են սեփական իրավունքների ու պարտականությունների գիտակցումն ու իրականացումը, դրական մասնակցությունն ու առաջնորդությունը, հասարակության իդեալներին հասու լինելու և դրանց համար պայքարելու կարողությունն ու ցանկությունը և այլն: Ժողովրդավարական հասարակության քաղաքացիներն իրենք պետք է լինեն սեփական կրթության պատասխանատուները, պետք է կարողանան դնել համապատասխան նպատակներ ու հասնել դրանց, պետք է ի վիճակի լինեն արժևորել իրենց տեղն ու դերը հասարակության մեջ և կատարել այն գործառույթները, որ հասարակությունն իր հերթին կակնկալի նրանցից: Ժողովրդավարական հասարակության քաղաքացիներ կրթելու այս և մի շարք այլ նպատակների հասնելու տեսանկյունից խիստ կարևոր է հասարակագիտության կրթական նշանակությունը:

Հասարակագիտությունը, իր մեջ ներառելով գիտելիքներ մի շարք կարևոր բնագավառներից, օժտված է վիթխարի կրթական ներուժով, քանի որ այն առարկա է, որ ձևավորում է մարդու աշխարհայացքը, մտածելակերպը,, արժեքային համակարգը, ինչպես նաև վերաբերմունքն իր և այլոց հանդեպ: Հասարակագիտության ուսուցումը ապագա քաղաքացուն հնարավորություն կտա իր առջև ծառանալիք խնդիրների պատասխանը որոնել ոչ թե տարերայնորեն, տեղեկատվական հեղեղի ճնշման ազդեցությամբ, այլ՝ օգտագործելով այն բոլոր հմտությունները, գիտելիքները և արժեքային մոտեցումները, որ նրա սեփականությունն են դառնալու դպրոցական նստարանից:

ԱՌԱՐԿԱՅԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

1. Հասարակագիտությունը հանձին իր կարևորագույն բաղադրիչի՝ փիլիսոփայության, ունի հազարամյակների պատմություն: Մյուս բաղադրիչ-ները (բարոյագիտություն, գեղագիտություն, իրավագիտություն, տնտեսա-գիտություն, քաղաքագիտություն) աստիճանաբար առանձնացել են փիլիսո-փայությունից՝ ավելի ու ավելի կարևորվելով ժամանակակից հասարակության պայմաններում: Տարբեր դարաշրջաններում հզորության են հասել այն քաղաքակրթությունները կամ ժողովուրդները, ովքեր կարողացել են ստեղծել կենսահաստատ փիլիսոփայական հզոր համակարգեր: Իսկ ժամանակակից աշխարհի ճգնաժամը հաճախ բացատրվում է այսօրվա իրողություններն ու պահանջները արտացոլող համակողմանի հասարակագիտական համա-կարգերի բացակայությամբ: Վաղուց արդեն գիտակցված իրողություն է, որ ժողովրդավարական հաստատությունների կառուցվածքն ու օրենքները կարող են լինել շատ լավը, սակայն եթե մարդիկ չունեն կամ չեն ստեղծում «ժողովրդավարական սովորույթներ», ժողովրդավարությունը կմնա լոկ որպես գաղափար: Այդ առումով շատ մեծ է հասարակագիտության դասավանդման նշանակությունը, քանի որ այստեղ է, որ սովորողը պետք է իր մեջ ձևավորի արժեքների, մոտեցումների, հմտությունների ու գիտելիքների այն համակարգը, որն իրականություն կդարձնի ժողովրդավարությունը:

2. Հասարակագիտության ուսումնասիրումը սովորողներին կօժտի ինքնուրույնությամբ, որի շնորհիվ ուսուցումը ոչ թե կընկալվի որպես պարտադրանք, այլ՝ որպես յուրաքանչյուր մարդու հնարավորությունները մեծացնող գործոն: Հասարակագիտության դասավանդման արդյունքներից մեկը կլինի այն, որ անձնային հարթության մեջ նրանք կհասկանան իրենց անհատականության զարգացման գործում իրենց իսկ անփոխարինելի դերը:

3. Հասարակագիտությունը, հատկապես քաղաքացիական կրթու-թյան բաղադրիչի շնորհիվ, կնպաստի ժողովրդավարական հասարակության քաղաքացու ձևավորմանը, ժողովրդավարության հիմնարար արժեքների յուրացմանն ու, այդ ամենի արդյունքում, քաղաքացիական հասարակության ձևավորմանը:

4. Իրավական գիտելիքները որպես հասարակագիտության կարևորագույն բաղադրիչ հնարավորություն կտան տարբերակել իրավունքի հետ առնչվող խնդիրները, հասկանալ դրանց իրավական ու ոչ իրավական լուծումների տարբերությունը, յուրացնել ու գնահատել օրենքների և օրինա-կանության նշանակությունը: Ի վերջո՝ դառնալ իրավագիտակից, օրինապաշտ և ակտիվ քաղաքացիներ:

5. Հասարակագիտության ուսուցումն արդի հասարակական իրողությունների հրամայական պահանջն է, քանի որ այն անչափ կարևոր են նոր հասարակական հարաբերությունների ձևավորման համար: Գործնական առումով շատ կարևոր է, որ սովորողներն ի վիճակի լինեն նախագծեր իրականացնել, որոնել-գտնել համայնքին հուզող խնդիրներ, առաջարկել դրանց լուծման ուղիներ ու հետամուտ լինել այդ ամենին: Գործնականում կարևոր է, որ սովորողների մեջ ձևավորվեն ակտիվ քաղաքացիության դիրքորոշում, իրավունքները պաշտպանելու, ինչպես նաև պատաս-

խանատվությունն իրականացնելու կամք և հմտություններ: Այդ ամենի արդյունքում սովորողները օժտված կլինեն իրականությունն ինքնուրույն վերլուծելու, սեփական մոտեցում և գործողություններ մշակելու կարողությամբ:

ԱՌԱՐԿԱՅԻ ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՄԻՋՈՒԿ

Ա. Հասարակագիտության ներածություն

Բնություն, մարդ և հասարակություն: Հասարակությունը և բնության պահպանությունը:

Մարդու հիմնական հատկությունները: Անհատ, անձ, անհատականություն: Մարդու սեռը. սեռային դերեր և տարբերություններ: Մարդու տարիքը. մանկություն, պատանեկություն, երիտասարդություն, հասուն տարիք և ծերություն: Աշխարհընկալումը տարբեր տարիքներում: Հարգանք տարբեր սեռի ու տարիքի մարդկանց հանդեպ: Մարդը որպես արժեք:

Մարդը որպես բանական էակ: Ճանաչողության աստիճանները. զգայություն, ընկալում, մտապատկեր, հասկացություն, դատողություն և մտահանգում: Կարծիք, փաստ, գիտելիք, համոզմունք:

Մարդը որպես հասարակական էակ: Գաղափար հասարակական կյանքի ոլորտների մասին: Տնտեսության դերը հասարակական կյանքում:

Փոքր և մեծ խմբեր: Ընտանիք և հասարակություն: Սեր, ընկերություն: Մշակույթ: Ինքնություն: Հաղորդակցություն: Հաղորդակցման դժվարությունները: Արդյունավետ հաղորդակցում: Հաղորդակցության ժամանակակից միջոցներ:

Գաղափար արժեքների մասին: Մարդը որպես արժեք: Մնայուն և անցողիկ արժեքներ: Հոգևոր և նյութական արժեքներ: Գեղեցիկն ու բարին որպես արժեք:

Համամարդկային արժեքներ: Ազատություն: Հանդուրժողականություն: Արդարություն: Պատասխանատվություն: Առողջություն:

Բ. Մարդու իրավունքներ

Մարդու իրավունքներ հասկացությունը: Մարդու իրավունքներ և ազատություններ: Մարդու իրավունքների բարոյական հիմքերը: Մարդու իրավունքների և ազատությունների իրավական բնույթը: Մարդու իրավունքներ հասկացության ծագումը և իրավունքների «սերունդները»: Իրավունքների, պարտականությունների և պատասխանատվության կապը:

Անհատ և պետություն: Քաղաքացիություն հասկացությունը: Մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության՝ պետության պարտականությունը: Մարդու իրավունքներին վերաբերող միջազգային հիմնարար փաստաթղթեր: ՀՀ Սահմանադրությունը՝ որպես մարդու իրավունքների աղբյուր:

Մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները: Մարդու քաղաքացիական իրավունքներ ու ազատություններ. հասկացությունը և էությունը: Մարդու քաղաքացիական իրավունքներն ու ազատությունները և մարդասիրական ու բարոյական արժեքները:

Քաղաքական իրավունքներ ու ազատություններ. հասկացությունը և էությունը: Քաղաքական իրավունքների ու ազատությունների պաշտպանությունը:

Մարդու և քաղաքացու տնտեսական ու սոցիալական իրավունքներ. հասկացությունը և էությունը:

Մարդու մշակութային իրավունքներ. հասկացությունն ու էությունը: Մշակութային իրավունքները որպես մարդու հոգևոր զարգացման երաշխիք:

Առանձին խմբերի անձանց իրավունքներ: Երեխայի իրավունքները: Երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի Հռչակագիրը և Կոնվենցիան: ՀՀ Սահմանադրությունը երեխայի իրավունքների մասին, «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքը:

Կանանց իրավունքները: Կանանց իրավունքների ամրագրումը ՀՀ օրենսդրության մեջ և միջազգային փաստաթղթերում: Կանանց և տղամարդկանց իրավահավասարությունը: Մայրության պաշտպանությունը:

Հաշմանդամների իրավունքները: Ազգային փոքրամասնությունները Հայաստանում: Ազգային փոքրամասնությունների մասին միջազգային փաստաթղթերը:

Մարդու իրավունքների երաշխիքները. հասկացությունը և տեսակները: Մարդու իրավունքների և ազատությունների սահմանադրական ընդհանուր երաշխիքները: Մարդու իրավունքների և ազատությունների դատական պաշտպանությունը: Մարդու իրավունքների և ազատությունների սահմանադրական հատուկ երաշխիքները: Մարդու իրավունքների պաշտպանը:

Մարդու իրավունքների պաշտպանությունը և Միավորված ազգերի կազմակերպությունը: Միջազգային դատարան: Մարդու իրավունքների պաշտպանության եվրոպական համակարգը: Կարմիր խաչի միջազգային կոմիտե: Իրավապաշտպան կազմակերպություններ հասկացությունը և դրանց գործունեության ուղղությունները: Միջազգային իրավապաշտպան կազմակերպություններ: Զանգվածային լրատվամիջոցների դերը մարդու իրավունքների պաշտպանության գործում:

Գ. Քաղաքացիական կրթություն

Ժողովրդավարություն հասկացությունը: Անմիջական և ներկայացուցչական ժողովրդավարություն: Ընտրությունները որպես ներկայացուցչական ժողովրդավարության իրականացման միջոց:

Քաղաքացիական հասարակություն. հասկացությունը, առանձնահատկությունները: Քաղաքացիական հասարակությունը և զանգվածային լրատվության միջոցները: Հասարակական կարծիքի ձևավորումը և բազմակարծության դերը քաղաքացիական հասարակությունում: Հասարակական կազմակերպությունների դերը քաղաքացիական հասարակությունում: Լոբբիզմ: Մասնակցություն և առաջնորդություն: Կոռուպցիան, դրա պատճառները և ձևերը:

Իշխանության անհրաժեշտությունը: Պետական իշխանության ճյուղերը (օրենսդիր, գործադիր, դատական): Իշխանության սահմանափակման սկզբունքները (զսպումներ և հակակշիռներ):

Տարածքային կառավարում և տեղական ինքնակառավարում: Մասնակցությունը համայնքի կյանքին: Համայնքային հիմնախնդիրներ:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Ուսուցման գործընթացում, կախված թեմայից, դասի նպատակից, դասարանից, քննարկվող հիմնախնդրի և սովորողների առանձնահատկություններից, առկա հնարավորություններից ու այլ հանգամանքներից, տվյալ դասի կամ դասի հատվածի համար ըստ նպատակահարմարության կարող են ընտրվել ուսումնական գործունեության հետևյալ տեսակները՝

- ուսումնական նյութի բացատրում, լուսաբանում
- ինքնավերլուծություն, զրույցներ ու հարցազրույցներ
- զանգվածային լրատվամիջոցներից ստացված տեղեկատվության վերլուծություն
- արվեստի գործերի ուսումնասիրում
- գեղարվեստական երկերի ընթերցում և քննարկում
- հիմնախնդիրների հետազոտում
- մտքերի տարափ
- դերային խաղեր
- ինտերնետի միջոցով շփում այլ մշակույթի ներկայացուցիչ հասակակիցների հետ
- հանդիպումներ հյուր դասախոսների հետ
- խաղերի, մրցույթների, հանդեսների անցկացում
- հաշվետվությունների և գրավոր հաղորդումների պատրաստում
- բանավեճ
- թեսթային աշխատանքների ու ստուգարքի անցկացում
- բարձր տեխնոլոգիաների օգտագործում, աշխատանք վիրտուալ գրադարանների հետ
- թղթապանակների պատրաստում, մեկնաբանում
- անհատական ու խմբային, ինքնուրույն և համագործակցային աշխատանքների կատարում
- նախագծերի իրականացում
- հանրօգուտ աշխատանքների ծրագրերի իրականացում
- համայնքային հիմնախնդիրների հետազոտում և այլն:

ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

գիտելիքներ, կարողություններ և հմտություններ

Ա. Հասարակագիտության ներածություն

Ուսումնառության արդյունքում սովորողը պետք է՝

Թեմա	Ա մակարդակ	Բ մակարդակ	Գ մակարդակ
1	**Ձևակերպի** բնություն, մարդ և հասարակություն հասկացությունները	**Հասկանա** բնության, մարդու և հասարակության փոխկապվածությունը	**Բացատրի** մարդ, բնություն և հասարակություն հասկացությունները և դրանց փոխհարաբերությունները:
	Հիմնավորի մարդու գործունեության ազդեցությունը բնության վրա:	**Վերլուծի** մարդու և հասարակության փոխներգործությունը ժամանակակից կյանքի օրինակներով:	- **Կանխատեսումներ անի** բնության և հասարակության ներդաշնակության խախտման հնարավոր հետևանքների մասին: - Առաջարկի բնության և հասարակության ներդաշնակության խախտումը կանխող քայլեր:
2	- Ընդհանուր գծերով **բնորոշի** մարդուն: - **Իմանա** մարդու հիմնական հատկությունները:	- **Տարբերի** մարդու սեռային և տարիքային տարբերություններից բխող սոցիալական դերեր: - **Հասկանա**, որ տարիքի հետ փոխվում է մարդկանց վերաբերմունքը միմյանց և աշխարհի հանդեպ:	**Հասկանա** հոգևոր կյանքի առանձնահատկությունները:

	Սեռային և տարիքային խտրական վերաբերմունքի **օրինակներ բերի**:	**Վերլուծի** ժամանակակից աշխարհում առկա խտրական վերաբերմունքի դրսևորումները տարբեր սեռի և տարիքի մարդկանց հանդեպ:	**Համեմատի** մարդու մասին ընկալումները պատմական տարբեր ժամանակաշրջաններում և տարբեր մշակույթներում:
3	**Իմանա** զգայական ճանաչողության տարրերը. զգայություն, ընկալում, պատկերացում:	**Տարբերակի** զգայությունը, ընկալումը, պատկերացումը:	Անմիջական և միջնորդավորված **մտահանգումներ կատարի**:
	Իմանա բանական ճանաչողության տարրերը. հասկացություն, դատողություն, մտահանգում:	- **Տարբերակի** հասկացությունների, դատողությունների և մտահանգումների տեսակները և օրինակներ բերի: - **Համեմատի** բառն ու հասկացությունը, դատողությունն ու նախադասությունը:	**Գործողություններ կատարի** հասկացությունների, դատողությունների և մտահանգումների հետ:
	Զգայությունների, պատկերացումների, ընկալումների **օրինակներ բերի**:	**Տարբերակի** կարծիքը, համոզմունքը, փաստը և գիտելիքը:	Կարծիքի, փաստի, գիտելիքի, համոզմունքի **օրինակներ բերի**:
4	- **Գաղափար ունենա** հասարակական կյանքի ոլորտների մասին: - **Տարբերակի** հասարակական մեծ և փոքր խմբերը:	- **Հիմնավորի** հասարակական կյանքի անհրաժեշտությունը: - **Բացատրի** ինքնություն հասկացությունը:	- **Վերլուծի** տնտեսության դերը հասարակական կյանքում: - **Հասկանա** տարբեր մշակույթների առանձնահատկությունների կարևորությունը:
	- **Բացատրի**, թե ինչ է ընտանիքը: - **Հասկանա** ընտանիքի և	**Վերլուծի** բախումների առաջացման պատճառները, ունենա դրանք կանխելու հմտություններ:	- **Հիմնավորի**, որ ընտանիքը հասարակության հիմքն է և ընտանիքի բարեկեցությունից է կախված

	ընկերական միջավայրի դերը, **կարողանա** դրականորեն ներազդել այլ մարդկանց հետ իր հարաբերությունների վրա:		հասարակության բարեկեցությունը: - **Զարգացնի** միջանձնային կոնֆլիկտը հաղթահարելու հմտություններ:
	Հասկանա, թե ինչ է հաղորդակցությունը և ինչու է այն կարևոր մարդկանց համար:	**Թվարկի** հաղորդակցության ժամանակակից միջոցներ և ներկայացնի դրանց նշանակությունը:	**Զարգացնի** արդյունավետ հաղորդակցման հմտություններ:
5	**Հասկանա**, թե ինչ են արժեքները:	**Տարբերակի** հոգևոր և նյութական, մնայուն և անցողիկ արժեքները:	- **Վերլուծի** արժեքային բախում պարունակող իրավիճակներ: - Արժեքային բախում պարունակող իրավիճակներում որոշում կայացնելու **օրինակներ բերի**:
	Իմանա, թե ինչ է ազատությունը, պատասխանատվությունը, հանդուրժողականությունը, արդարությունը:	Ազատություն, հանդուրժողականություն, պատասխանատվություն, արդարություն հասկացությունների փոխկապվածության վերաբերյալ **օրինակներ բերի**:	**Հասկանա** ազատության, պատասխանատվության, հանդուրժողականության և արդարության կապը:
		Բ. Մարդու իրավունքներ, մաս 1-ին	
6	**Իմանա** մարդու իրավունքներ և ազատություններ հասկացությունները:	**Հիմնավորի** իրավունքների և պարտականությունների կապը:	- **Մեկնաբանի** մարդու իրավունքների միջազգայնացման էությունը: - **Վերլուծի** անհատի և պետության փոխհարաբերությունները:

	- **Իմանա** մարդու իրավունքների բարոյական ու փիլիսոփայական հիմքերը: - **Իմանա** ՀՀ Սահմանադրության մեջ մարդու իրավունքներին առնչվող հոդվածները:	- **Հիմնավորի** մարդու իրավունքների բարոյական և փիլիսոփայական հիմքերը: - **Ներկայացնի** մարդու իրավունքներին վերաբերող միջազգային հիմնարար փաստաթղթեր:	- **Գնահատի** մարդու իրավունքների միջազգայնացման կարևորությունը: - **Վերլուծի** ՀՀ Սահմանադրության՝ մարդու իրավունքներին վերաբերող հոդվածները:
	- **Իմանա** մարդու իրավունքներ հասկացության զարգացման հիմնական փուլերը: - **Տարբերակի** մարդու իրավունքների <<սերունդները>>:	- **Ներկայացնի** մարդու իրավունքների զարգացման փուլերը,	**Վերլուծի** մարդու իրավունքների զարգացման փուլերի նշանակությունը:
7	**Իմանա** մարդու քաղաքացիական իրավունքներն ու ազատությունները:	**Բացատրի** մարդու քաղաքացիական իրավունքների կապը մարդասիրական ու բարոյական արժեքների հետ:	**Վերլուծի** մարդու քաղաքացիական իրավունքների և ազատությունների, քաղաքացիական, տնտեսական և սոցիալական իրավունքների կապը տնտեսական զարգացման ու բարեկեցության հետ:
	Իմանա մարդու քաղաքական իրավունքներն ու ազատությունները:	**Դատողություններ անի** քաղաքական իրավունքների պաշտպանության և ժողովրդավարության կայացման	**Հիմնավորի** պարտականությունների և իրավունքների փոխադարձ կապը և նշանակությունը քաղա-

		մասին:	քաղաքացիական հասարակության ձևավորման գործընթացում:
	Իմանա մարդու տնտեսական, սոցիալական, մշակութային իրավունքները:	**Բացատրի,** թե ինչպես են մշակութային իրավունքները խթանում մարդու հոգեկան զարգացումը և մշակութային բազմազանությունը:	**Մեկնաբանի** մշակութային իրավունքների տեղը այլ հիմնարար իրավունքների ու ազատությունների շարքում:
		9-րդ դասարան **Մարդու իրավունքներ, մաս 2-րդ**	
9-րդ դաս., Թեմա 1	- **Իմանա** երեխայի իրավունքներ հասկացությունը: - **Թվարկի** երեխայի իրավունքների վերաբերյալ միջազգային և ներպետական իրավական ակտեր:	**Ներկայացնի** երեխայի իրավունքների պաշտպանության առանձնահատկությունները:	**Մեկնաբանի** երեխայի իրավունքների վերաբերյալ միջազգային և ներպետական իրավական ակտերի դրույթները:
	Իմանա կանանց և տղամարդկանց իրավահավասարություն հասկացությունը:	**Ներկայացնի** կանանց իրավունքների վերաբերյալ միջազգային փաստաթղթերը:	**Հիմնավորի** կանանց իրավունքների և մայրության պաշտպանության անհրաժեշտությունը:
	Իմանա՝ -հաշմանդամների իրավունքների առանձնահատկությունները	**Հիմնավորի** հաշմանդամների և ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության անհրաժեշտությունը:	**Մեկնաբանի՝** - հաշմանդամների իրավունքների առանձնահատկությունները - ազգային փոքրամասնությունների իրավունքները,

	-ազգային փոքրամասնություն հասկացությունը:		
2	**Իմանա** մարդու իրավունքների երաշխիքները, թվարկի դրանց տեսակները:	**Ներկայացնի** մարդու իրավունքների և ազատությունների սահմանադրական ընդհանուր երաշխիքները:	**Հիմնավորի՝** - մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության կարևորությունը, - պետության դերը՝ որպես մարդու իրավունքների և ազատությունների երաշխավոր:
	Իմանա իրավապաշտպան կազմակերպություններ հասկացությունը և դրանց դերը:	**Ներկայացնի** ՄԱԿ-ի մարմինների և եվրոպական կառույցների, Կարմիր խաչի միջազգային կոմիտեի գործառույթները մարդու իրավունքների պաշտպանության ուղղությամբ:	**Մեկնաբանի** Միավորված ազգերի կազմակերպության և եվրոպական կառույցների դերը մարդու իրավունքների պաշտպանության գործում:
	Նկարագրի իրավապաշտպան տեխնոլոգիաներ:	**Ներկայացնի** զանգվածային լրատվամիջոցների դերը մարդու իրավունքների պաշտպանության գործում:	**Հիմնավորի** իրավապաշտպան կազմակերպությունների և մամուլի համագործակցության անհրաժեշտությանը:
		Գ. Քաղաքացիական կրթություն	
3	- **Իմանա** ժողովրդավարության սկզբունքների և արժեքների պատմական զարգացումը: - **Տարբերակի** անմիջական	**Բացատրի** ժողովրդավարական պետության բնութագրերը՝ օրինակներ բերելով ՀՀ Սահմանադրությունից:	**Բնութագրի** ժողովրդավարական ընտրությունները որպես ներկայացուցչական կառավարման հիմնական ինստիտուտ:

	և ներկայացուցչական ժողովրդավարությունը:		
4	**Իմանա** քաղաքացիություն և քաղաքացիական հասարակություն հասկացությունները:	**Ներկայացնի** քաղաքացիության ձեռքբերման և դադարման սկզբունքները:	**Մեկնաբանի** քաղաքացիական դիրքորոշման բնութագրիչներ:
	Իմանա զանգվածային լրատվության միջոցներ հասկացությունը:	**Ներկայացնի** զանգվածային լրատվամիջոցների դերը քաղաքացիական հասարակության ձևավորման գործընթացում:	**Հիմնավորի** տեղեկացվածության անհրաժեշտությունը քաղաքացիական հասարակության ձևավորման գործում:
	- **Իմանա** համայնք հասկացությունը: - **Իմանա** հասարակական կազմակերպությունների դերը քաղաքացիական հասարակությունում	- **Բացատրի** քաղաքացիական հասարակության բաղկացուցիչները (հասարակական կազմակերպություններ, խոսքի ազատություն և այլն): - **Տարբերակի** ակտիվ և պասիվ մասնակցությունը:	- **Հասկանա և բացատրի** հասարակական կազմակերպությունների տեղն ու դերը քաղաքացիական հասարակության մեջ: - **Հիմնավորի** հասարակական կարծիքի և խոսքի, մտքի ազատության կարևորությունը:
	Իմանա կոռուպցիա հասկացությունը:	**Ներկայացնի** կոռուպցիայի պատճառները և ձևերը:	**Հասարակական** կյանքի տարբեր ոլորտներում կոռուպցիայի օրինակներ բերի:
5	**Իմանա** պետական իշխանության անհրաժեշտությունը:	**Բացատրի** օրենսդիր, գործադիր, դատական իշխանությունների ձևավորման սկզբունքները:	**Մեկնաբանի** իշխանության ճյուղերի տարանջատման սկզբունքի հիմնարար նշանակությունը ժողովրդավարական հասարակությու-

			նում:
	Իմանա, թե ինչ է համայնքային հիմնախնդիրը և հանրային քաղաքականությունը:	- **Հասկանա** տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման տարբերությունը: - **Ընտրի** համայնքային հիմնախնդիրների լուծման այլընտրանքային տարբերակներ:	- **Մեկնաբանի** համայնքային հիմնախնդիրներ: - **Վերլուծի** համայնքային հիմնախնդիրների վերաբերյալ հավաքած տվյալները:

Արժեքային համակարգ

Հասարակագիտության ուսումնասիրության շնորհիվ սովորողը պետք է՝

- Գիտակցի հասարակական կյանքի անհրաժեշտությունը:
- Կարևորի իր դերը և պատասխանատվությունը հասարակության զարգացման գործընթացում:
- Արժևորի մարդկանց տարիքային, սեռային տարբերությունները և առանձնահատկությունները:
- Արժևորի ճանաչողության և բանականության դերը մարդու կյանքում:
- Արժևորի հասարարակական կյանքին մարդու մասնակցության կարևորությունը:
- Գնահատի սեփական կարծիքի, գիտելիքի և համոզմունքի դերը կյանքում:
- Կարևորի սեփական ինքնությունը և դրա բաղկացուցիչ մասերը:
- Արժևորի արդյունավետ հաղորդակցման կարևորությունը կոնֆլիկտների հաղթահարման գործում:
- Արժևորի տարբեր մշակույթների նմանություններն ու տարբերությունները:
- Գիտակցի համամարդկային հիմնարար արժեքների կարևորությունը:
- Արժևորի պատասխանատվությունը և արդարությունը, ազատությունը, հանդուրժողականությունը՝ որպես ներդաշնակ հասարակական կյանքի հիմնական պայման:
- Կարևորի մարդու իրավունքների, բարոյականության և օրենքի կապը:
- Արժևորի մարդու իրավունքներն ու պարտականությունները:
- Գնահատի մարդու իրավունքների միջազգային պաշտպանության և ՀՀ Սահմանադրության կապը:
- Արժևորի անձնական ազատության և արդարության գաղափարները:
- Կարևորի տնտեսական և սոցիալական իրավունքների կապը այլ հիմնարար իրավունքների և ազատությունների հետ:
- Կարևորի մշակութային իրավունքների տեղը այլ հիմնարար իրավունքների ու ազատությունների շարքում:
- Կարևորի երեխայի իրավունքների վերաբերյալ միջազգային և ներպետական իրավական ակտերի դրույթները:
- Գնահատի կանանց և տղամարդկանց իրավահավասարությունը:
- Կարևորի հաշմանդամների և ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության անհրաժեշտությունը:
- Գնահատի հրապարակայնության և խոսքի ազատության դերը մարդու իրավունքների պաշտպանության գործում:

- Կարևորի մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության երաշխիքները ։
- Գնահատի ժողովրդավարություն և ազատություն հասկացությունները, դրանց կարևորությունը իր և հասարակության համար։
- Կարևորի ժողովրդավարության առավելությունները։
- Կարևորի քաղաքացիական հասարակություն և ժողովրդավարություն հասկացությունների կապը և դերը։
- Կարևորի լրատվամիջոցների աշխատանքը:
- Կարևորի հասարակական կարծիքի ազդեցությունը ժողովրդավարական հասարակությունում։
- Գնահատի օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների հիմնական գործառույթները։
- Կարևորի համայնքային հիմնախնդիրների լուծման գործում իր և ուրիշների մասնակցությունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Իրավունք. մարդու իրավունքներ, քաղաքացիական կրթություն, պետություն և իրավունք, մեթոդական ձեռնարկ ուսուցիչների համար, 8-10-րդ դասարաններ, Հարությունյան Ն., Վաղարշյան Ա., Տիգրան Մեծ, Երևան, 2001:
2. Հասարակագիտության ուսուցման արդի հիմնահարցեր, ձեռնարկ մանկավարժների համար, Խաչատրյան Ս., Պետրոսյան Ս., Արնաուդյան Ա. և ուրիշներ, Տիգրան Մեծ, Երևան, 2005:
3. Հասարակագիտության ինտեգրված ուսուցում, Պետրոսյան Ս., Խաչատրյան Ս., Խաչատրյան Հ. և ուրիշներ, Լուսաբաց, Երևան, 2006:
4. Ժողովրդավարության հիմնարար արժեքներ. ուսումնական ձեռնարկ 8(9)-րդ դասարանների համար, Խաչատրյան Ս., Պետրոսյան Ս., Տեր-Մկրտչյան Թ. և ուրիշներ, Էդիթ Պրինթ, Երևան, 2005.
5. Ժողովրդավարության հիմնարար արժեքներ, ուսուցչի ձեռնարկ 8(9)-րդ դասարանների համար, Խաչատրյան Ս., Պետրոսյան Ս., Տեր-Մկրտչյան Թ. և ուրիշներ, Էդիթ Պրինթ, Երևան, 2005:
7. Միջազգային մարդասիրական իրավունք, Հանս Պիտեր Գասեր, Ներածություն, ԿԽՄԿ, Երևան, 2003.
8. Հասարակագիտություն. ուսուցման բովանդակություն և դասավանդման ակտիվ մեթոդներ: Թովմասյան Տ., Թոմա Մ. Թ, Երևան, 2010:
9. Կրթությունն ընդդեմ կոռուպցիայի. մեթոդական ձեռնարկ ուսուցիչների համար: Էդիթ Պրինտ, Երևան, 2010:.
10. Հասարակագիտություն. ուսուցման բովանդակություն և դասավանդման ակտիվ մեթոդներ: Թովմասյան Տ., Թոմա Մ. Թ, Երևան, 2010:
11. Введение в обществознание. Учебное пособие для 8-9 кл. общеобразоват. учреждений. Под ред. А.Н.Боголюбова. Москва, Просвещение, 1996.
12. Человек и общество. Учебное пособие по обществознанию для учащихся 10-11 кл. общеобразоват. учреждений. Под ред. А.Н.Боголюбова, А.Ю.Лазебниковой, Москва, Просвещение, 1996.
13. Введение в политологию, Учебное пособие для 10-11 кл. общеобразоват. учреждений. Гаджиев К.С., Каменская Т.В., Родионов А.Н., 3-е издание Москва, Просвещение, 1998.
14. Человек, 9 кл. Пособие для общеобразоват. учреждений, Гуревич П.С., 2-е изд. Москва, Дрофа, 1997.
15. Поршнев Б.Ф., Социальная психология и история, 2-е издание, Москва, Наука, 1979
16. О человеческом в человеке, под ред. И.Т.Фролова, Москва, Политиздат, 1991.
17. Гобозов, И.А., Введение в философию истории, 2-е издание, Москва, ТЕИС, 1999.